ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմի 1

№__4400-Ա___ « 13 » նոյեմբերի 2024 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՏՈՒՐԻԶՄԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ԳՈՇ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՉԵԽԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ՊՐԱՀԱ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Չեխիայի ազգային բալետի գործադիր տնօրեն Մարտին Ռայպանի հրավերը՝ Մաուրո Բիգոնզետտիի «Շահերեզադա» բալետի համաշխարհային պրեմիերան դիտելու՝ ինչպես նաև համագործակցության հարցեր քննարկելու նպատակով և ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով.

1. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության պետ Գոշ Սարգսյանին 2024 թվականի նոյեմբերի 27-ից 29-ը ներառյալ գործուղել Չեխիայի Հանրապետության մայրաքաղաք Պրահա:

2. Ընդունել ի գիտություն, որ գործուղման հետ կապված բոլոր ծախսերն իրականացվում են 2024 թվականի Երևան քաղաքի բյուջեի հաշվին՝ բացառությամբ գիշերավարձի, որը հոգում է հրավիրող կողմը:

3. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության պետ Գոշ Սարգսյանի բացակայության ընթացքում վարչության պետի պարտականությունները վերապահել նույն վարչության պետի տեղակալ Գևորգ Սահակյանին:

4. Գործուղումից վերադառնալուց հետո, 3 աշխատանքային օրվա ընթացքում, փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը և դրանք հավաստող փաստաթղթերը ներկայացնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ